



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



ՏՆՕՐԻՆ

ՏՕՐԹ. Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

( Ա. ՏԱՐԻ )

1 ՄԱՅԻՍ 1900

( ԹԻԻ 4 )



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արատամանի հայուրեան բարոյականը, Երուանդ Արմաբէշեանիւն.  
— Մնաս բարով (Էրեթ-աշ). Արամ. — Օլկա Յօնէաբու, Գամեր-Արշաւիր. —  
Դիսակուն տրնազանց (Դարբասէր Գերաշէ), Յ. Ս. Փափազեան. — Տիկին Չա-  
սուլեանեան, Ե. Արմաբէշեանիւն. — Մուանդ Մանուկեան եւ Էսկար Շա-  
կին. — Այվազովաբի. — Մխիթար Աբբա, Ե. Ս. — Միխասարդ բուրեբը.  
— Խնայեցե՛ք, Տիգրան Աճէմեան. — Կիսամանակ.



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պաշտօնային համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք  
Արատաստահանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք  
Ամերիկայի » » 2 1/2 տար

“ՉԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Առաջին քիւր ստացող եւ ետ չդարձնողը բաժանորդ  
կը նկատուի :

Բաժնեգին եւ գրամ գրկել ՄԻՍՅՆ հեռուեալ հասցէին

D<sup>r</sup> H. S. PAPA ZIAN

VARNA

Իսկ նամակ, յողուած եւ թերթ գրկել հեռուեալ հասցէին

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

Varna

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

# ՇԱԽԻՂ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՄԱՅԻՍ 1900

Թիւ 4

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

### ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Նոր-կեսեմ, իր սպրիւ մէկի համարին մէջ, աւաղելի լուր մը տուած ատենը ընտանաբնակ հայու մը կատարած գողութեան մասին, կըսէր թէ անգլիական կարգ մը թերթեր այդ լուրը հազարգերով հանդերձ զլուչացած էին ոճրագործին ազգութիւնը յայտնելու: Այս պարագան երկու բան կապացուցանէ. մէկը՝ անգլիական մամուլին բարեացակամութեան աղնիւ ոգին մեզ նկատմամբ և յետոյ այն վախը թէ այս տեսակ անհասական սգեղ տնկումներ կրնան ամբողջ ազգի մը բարոյական վարկը կործանել աշխարհի առջեւ:

Այս վերջին պարագային ծանրութեան ահաւորութիւնը լիովին ըմբռնելու համար կը բաւէ միայն մտածել թէ հայ ազգը, կրթներու ու է կուսանէ զարկ և նիւթական ուժէ բացարձակապէս ձեռնթափ, սպրբը, գոյութիւնը շարունակե-

լու մի միակ պատուանդան մը ունի, — իր բարոյական համբար:

Ազգի մը կեանքը ճիշդ անհատի մը կեանքին կը նմանի: Նիւթական ամէն տեսակ առաւելութենէ զըրկուած մէկը՝ գոնէ համեմատապէս հանգարտ ու երջանիկ կեանք մը վարելու համար՝ անհրաժեշտօրէն անարտա բարոյականի և անսագիւտ պատուազգացութեան տէր ըլլալու է: Ազատութեան փողիտղուն իտէալովը տառապող ազգ մըն ալ, որպիսին է մերը, այս ճշմարտութեան հետեւելուն մէջ միայն կրնայ իր ձգտումներուն հանդոյցին լուծումը գտնել:

Այսօր դուրս ելած ենք մեր սահմաններէն, ուր դարերով ապրած էինք խորհրդաւոր մեկուսացումով մը, աշխարհի մեծագոյն մասին անծանօթ տարր մը մնալով գրեթէ: Ու յանկարծ, ահազնադղորդ շունդիւնով ներկայացանք աշխարհի, մեր վէշքերը փռելով անոր առջեւ ու մեր արեան կահակները ցուցնելով անոր: Այս տեսակ ներկայացում մը, որ իսկապէս շատ ցաւալի ու

տարօրինակ ներկայացում մըն է, ցնցեց ամէնքը և սպասուած ծանօթացումը անցի ունեցաւ կայծակի արագութեամբ, վասն զի դարերէ ի վեր անծանօթ մնայած ազգ մը բնական կերպով ճանչցուելու համար դարձեալ դարերու պէտք ունէր: Ուրեմն մենք մեր կացութենէն օգտուեցանք ուղղակի: Ու պէտք է որ այդ կացութենէն շարունակենք օգտուիլ, մինչեւ որ վերջապէս մեր փնտուածը յաջողինք գտնել:

Օտարութեան մէջ սփռուած ենք, ուսկից կ'սպասենք մեր փրկութեան ճարը: Տիեզերական կարծիքը հարութեան մասին՝ ամենածանր կշիռունի մեր ճակատագրին վրայ: Այդ կարծիքը պէտք է որ շարունակապէս նպաստաւոր ըլլայ մեզի համար: Ու, առժամելի դժբախտութեանց միջոցին, հանրային նպաստաւոր կարծիքի մը վայելման բախտը ունեցանք: Ամբողջ աշխարհի մամուլը գրեթէ միահամուռ կերպով ոչ միայն ուժգնօրէն վար զարկաւ դործուած անլուր ոճիրը, հապա հայուն գեղեցիկ յատկութիւններուն, հազուադիւր ճիւղերուն շուրջ գովեստի պսակ մը հիւսեց: Մեր պարկեշտ, առաքինի, աշխատասէր, անվհատ և բարոյական ուրիշ առուելութիւններով զարդարուած ազգ մը ըլլալը փողով ու թմբուկով յայտարարուեցաւ:

Եւ քանի որ հանրութեան կարծիքը մեծադոյն կշիռը ունի մեր

փրկութեան գործին մէջ, և արտասահման կայ բազմատարր հայութիւն մը օտարին հետ շարունակ շփման մէջ, մեր անդուլ մտածման, մեր գուրգուրալից հոգածութեան աւարկան ըլլալու չէ՞ կազմուած գերազանցապէս նպաստաւոր այդ կարծիքը անազարտ, անայլայլ պահել, թող չտալ որ անիկա շեղում մը, թուլացում մը ունենայ և մանաւանդ « յետագարձ շարժում » ի մը ողբալի երեւոյթը առաջ գայ, որ ապահովապէս մեր վերջնական կործանումը պիտի վճռէ:

Ասոր համար, արտասահմանի հայերս՝ մեր վարմունքին, կենցաղին ու նիստուկացին մէջ նուրբ ռազմագիտութիւն մը ի գործ դրնելու հարկին առջեւը կը գտնուինք, և նոյն իսկ ստիպուած ենք տոհմային ընդածին թերութիւններ վարպետութեամբ սքողելու միջոցներուն գիմել: Մենք հայութեան այն հատուածն ենք, որուն գիրքը ամենէն աւելի փափուկ է: Ընդհանուր ազգին պատիւը բարձրացնելը կամ վտանգելը մեր ձեռքն է լոկ, և որովհետեւ մեր պատիւին ու բարոյական քրեադիժին անվթար պահպանումէն կախում ունի մեր փրկութիւնը, հետեւապէս կրնանք կամ ամբողջ ազգին դահիճը ըլլալ կամ անոր ազատարար հրեշտակը:

Ո՞վ կուզէ յանձն առնել դահիճի պաշտօնը:

\*  
\* \*

Անշուշտ այն հայը, որ քսակահատի մը գձուձ լրբութեամբը իր մէկ աղբակիցը կողոպտած է շնտանի մէջ, ուր ընկերային այնքան նախանձելի դիրք մը կը գրաւէր, ազգին պատիւին գէժ՝ դաւադրող անխղճահար սրիկայ մըն է, և այն պայմաններուն հետեւանօք, որոնց ներքեւ այդ հայը ճանչցուած էր անդիական ընկերութեան մէջ, իր գործած գռեհիկ ոճրին հակահարուածը ահեղօրէն բուռն ու աղէտաւոր կըլլայ ազգային արժանապատուութեան համար: Իրօք, անգլիական մամուլը ազնուական փափկանդկատութիւնը կուեննայ այդ անարգաւազակին անուանը քով հայ անունը չաղարտելու, բայց այն շըրջանակն իսկ, ուր խաբեբան ծանօթ էր, բաւական չէ՝ կարեւոր տարածութեան մը վրայ հայ բառը պըտըտըտ գրամաշարթին անուանը հետ:

Նմանօրինակ վշատութիւն գէպքեր՝ այսօր Անգլիա, վաղը Ամերիկա, միւս օր Ֆրանսա, ու մնաս բարով հայութեան պատիւ, հայութեան համար տածուած՝ ընդհանուր համակրութիւն:

Ընթերցողին կը ձգեմ մաքովը ըմբռնելու ահռելիութիւնն այն պարտաւրային երբ՝ թուրքիաէն դուրս, բովանդակ քրիստոնէայ աշխարհը հայուն վրայ իր նախնական հա-

ւատքը հիմնիվեր շրջելով՝ մեզի նրկատէ խաբեբաներէ, սինըքորներէ, անբարոյական արարածներէ կազմուած ազգ մը, գնչուի պէս առտանդական, բախտախնդիր ու կեղծաւոր, որուն չարժեր օգնութեան ձեռք կարկառել, կարեկցութեան նայուածք մը իսկ արձակել: Այն ատեն մենք մեր ճակատագրին հետ մի՛ս մինակ ենք, մեր ահաւոր ճակատագրին հետ:

Ու ի՞նչ կը մնայ ընել, եթէ ոչ ամէնքս ալ միանուալ համաձայն ձայնութեամբ մը լռիկ միջիկ ոտքի ելլալ, ուղղուիլ գէպ ի ծով, ետեւնիս ձգելով քառասուն դարու կեանք, պատմութիւն, յիշատակ, և անդունդն ի վար գահավիժելով ամենէն եղերական ձեւովը փակել մարդկային պատմութեան ամենէն եղերական արարուածներէն մէկը:

Եւ իսկապէս ասիկա կը մնայ ընել ազգի մը, որ օտարին առջեւ իր տոհմին պատիւն ու բարոյականը բարձր պահելու ամենադիւրին և ամենակարեւոր գործը գլուխ հանելու առաքինութենէն իսկ զուրկ ըլլալով՝ իր գոյութեան պահպանումին հարկաւոր ուրիշ միջոցներու գործադրութեան մէջ ալ անշուշտ նոյնքան ապիկար, նոյնքան անյաշուղ ու ագէտ պիտի գտնուի:

Մինչեւ ցարդ ուրեք ուրեք պատահած ցանցաւ գէպքեր գձուձ ու ստորին արարքներու՝ դեռ անգոր են համայնական համակրութիւն մը

ատելութեան և պժգանքի փոխել .  
բայց ամփոփուելու , զգուշ կենալու  
ժամը ապահովապէս եկած հասած  
է , որովհետեւ կրնայ ըլլալ որ մեր  
չպատած մէկ վայրկենին՝ աշխարհի  
հակակրութեան ենթարկուելու ա-  
հեղ զժբախտութեան տակ ճըզ-  
մուինք ու կորսուինք :

Երուանդ Մամախչեյանցիեան

**ՄԱՍՍ ԲԱՐԱՎ**

Ձե՛ն էրուք , լուրերս՝ մե՛կ փոքրե՛տ ,  
Սերս , երբ մե՛կ փոքրե՛տ է լուր մերժե՛ց .  
Մըրի՛ ըրի , հե՛տոսմ , երբե՛տ .  
Ո՛ր է յե՛տ մերժե՛տ Խո՛ւք ուրբե՛տ :

**Մնաս բարո՛ղ :**

Սերե՛ց Խո՛ւ , ցը՛րտե՛ն , լը՛նքե՛տ ,  
Մը՛կն Բո՛յր , Խո՛ւն ա՛լք , Խո՛ւն ուրբե՛տ .  
Լը՛նք Բը՛րտո՛ւ մե՛կ էլ , Խո՛ր ու երբե՛տ .  
Բո՛յր ու Խո՛ւն , ուրբե՛տ , Խո՛ւք հը՛ծե՛ցն :

**Մնաս բարո՛ղ :**

Բո՛ւնե՛ն մե՛կ ուր էր քո՛ղմ յո՛ւսհար ,  
Տարբո՛ր յո՛յե՛ր է լը՛նք յո՛ր Բա՛ծու՛ն ,  
Ձո՛յե՛րն ա՛նոց որ է լուրն ա՛նոքար ,  
Ո՛ր լը՛նքն լը՛նքո՛ւն Խո՛ւք է հե՛տ :

**Մնաս բարո՛ղ :**

Մը՛նք Բո՛ր . . . լը՛նքն լը՛նքն լը՛նքն .  
Բո՛ւն լը՛նքն լը՛նքն յո՛յո՛ւնք ուրբե՛տ . . .  
Անճը՛նքն մե՛կ Խո՛ւն ուրբե՛տ .  
Վերջա՛յնն հե՛տ է լը՛նքն ուրբե՛տ Խո՛ր :

**Մնաս բարո՛ղ :**

ԱՐԱՄ

**ՕՐ. ՕԼԿԱ ԵՕՆԵՍՔՈՒ**

Շատոնց ի վեր պոլսահայերուն ու  
արասահմանի մէջ կազմուած կար-  
ծիք մը կայ թէ Ռուսմանիոյ մեր բը-  
նիկ ազգակիցները անդարձօրէն փը-  
ճացած են հայութեան համար , տոն-  
մային ամէն յատկանշութենէ , նկա-  
րագրէ , զգացումէ բացարձակապէս  
զուրկ , յաւէտ կորուսած հայրենասո-  
րական ամէն ձգտում , անտարբեր  
ազգային զժբախտութեանց արիւնոտ  
տեսարաններուն առջեւ , և անկարե-  
կիր այն վէրքերուն որոնցմով ծած-  
կուած կը գտնուին իրենց հին հայրե-  
նիքին հարազատ զուկըները :

Այլ եւս աւելորդ կը սեպեմ հոս եր-  
կարօրէն մանրամասնել այն հազա-  
րիցս յեղյեղուած շարժառիթները ու-  
րոնք Հայաստանի այս գաղթական-  
ները առաջնորդած են այլասերու-  
թեան դերբուկ ուղիներուն վրայ ,  
ուր անոնք կը տատանին դեռ վարա-  
նոտ ու անտոյգ : Բայց ճշմարտու-  
թիւնը սա է իսկապէս որ ռուսմանա-  
հայերը դարաւոր լքումով թէեւ ըն-  
դարմացած՝ հեռու են ամբողջովին  
մեռած կամ կորսուած ըլլալէ հայու-  
թեան համար : Նախախնամական հը-  
րաշքի մը պէտք չկայ զանոնք հար-  
կադրելու համար որ վերադառնան ի-  
րենց հայրենակիցներուն գիրկը : Կօր  
ձեռք մը , աննկուն ոգի մը կը բաւէ  
զանոնք ցնցելու , սթափեցնելու և  
ձեռքերնուն բռնելով վարելու այն  
ուղիէն ուսկից կ'ընթանայ հայու-  
թիւնն համարուն , որքան ալ փուշե-  
րով , տառապանքով ու արիւնով ծած-  
կուած ըլլայ այդ ուղին :

Անակնկալ մը կուզայ զիս ամրա-  
պընդել այս գաղափարիս մէջ , և այն

քաղցր համոզումը ներշնչել ինձի թէ ուումանահայերը իրենց երակներուն մէջ ու սրտերնուն խորը, ժամանակի մոխիրներուն տակ անթեղուած թէեւ, միշտ պահած են կայծ մը իրենց պապերէն, Անիի այն ազնուատոհմ հայերէն որոնց ուղղակի յաջորդներն են իրենք: Օտար միջալայքը, օտար երկիրնքն ու օտար ազդեցութիւնը դարաւոր աշխատանքով չեն յաջողած եղծել տոհմային նկարագիրը: Եօնէս-քու կոչուի թէ Քաբրի, Բրունքութէ Չօմաք, սպայի փայլուն համազգեստը կրէ կամ գասաւորի վերարկուն, իր աչքին, իր յօնքերուն, իր ճակտին, իր քթին ու ամբողջ դիմագծութեան վրայ գրոշմուած պիտի տեսնես նախկին անցին:

Բայց դառնանք անակնկալին, ուրուն սակայն ամէն հայ պատեհութիւն չպիտի ունենայ հանդիպելու:

Ինտատի օրիորդ մը, Օլկա Եօնէսքու, հայկական գոթոսային կոտորածներու նկարագրութիւնը կարգացած է թերթերու մէջ. իմացած է թէ քոյրեր ունի Շաքէի եւ ուրիշ գիւցաղնուհիներու պէս, որոնց հայրենասիրութիւնը եւ առաքինութիւնը բտուուեր ածած են պատմութեան մէջ իր կարգացած ժանն տ'Արքներուն. կարգացած է թէ եղբայրներ ունի, որոնք հեռուն, սիրելի երկրի մը մէջ որ Հայաստան կը կոչուի եւ ուր ծընած են իր նախնիք, առիւծի կոխներ կը մղեն, գերմարդկային տառապանքներու կը տոկան՝ իրենց ազատութեան, պատուին եւ ազգութեան սիրոյն համար:

Մոխիրի խաւերու տակ ծածկուած կայծը մէկէն ի մէկ կը բռնկի. հայու արեան վազքը կ'զղայ իր երակներուն մէջ. գոտարարակուած է. գրեւ


զիտէ. ուստի իր ամբողջ դառնութիւնը ամփոփելու, իր հեռաւոր եղբայրներուն եւ քոյրերուն մեծարանքի եւ սրտակցութեան գրաւական մը տալու համար ուումաներէն լեզուով «Սէր եւ Ատելութիւն» անուն թատերագութիւն մը (\*) կը յօրինէ: Կարգացի զայն եւ սքանչացայ. ու խաղին դարձուածքները չէ որ զիս հրապուրեցին, այլ հայրենասիրութեան այն կրակոտ խօսքերը զորս մատղաշ օրիորդը կը գնէր իր հերոսներու բերնին մէջ՝ այդ սիրելի կայրեկեանց, Բողոք Հայաստանի ազատութեան համար:

Ըսէք ինձի եթէ ասիկա անակնկալ գէպք մը չէ, եթէ սիտիարար եւ յուսադրիչ նշան մը չէ: Ի՞նչ գաղտնիք է ատիկա. ի՞նչպէս կըլլայ որ Օլկա Եօնէսքու մը, որ հազիւ հայերէն այբուբէնը կը ճանչնայ, որ երբէք հայ կրթութիւն առած չէ ո՛չ գալբոցը, ո՛չ տունը, յանկարծ կեւլէ հայունի կը դառնայ, կը զղայ, ինչ որ կըզգանք մենք, թրքահայերս, որ ամէն խժգոթութեանց ներկայ, ամէն տառապանքի մասնակից, դառնացած, վրէժխնդիր, թուրքին դէմ յաւիտենաբար կանգուն ուրուական, ամէն ատենէ աւելի հայ ենք ու կը մնանք:

Արդ՝ ինչ որ պատահած է Օր. Եօնէսքուի հետ, նոյն հոգեկան փոփոխութիւնը պիտի կատարուի բոլոր ուումանահայերու վրայ, եթէ մէկը ըլլայ անոնց հասկցնող թէ ինչ եղած է մեր անցիւլը, թէ ինչ ենք եւ թէ ի՞նչ կուզենք ըլլալ:

ԳԱՄԵՐ-ՍՐՇԱԻՐ

(\*) Թերեւս պատեհութիւն ունենամ այս թատերախաղին դիտաւոր գրուագները ներկայացնելու Շո-է-է ընթերցողներուն, աւելի ճիշդ գաղտփոր մը տալու համար ուումանոհայ օրիորդի մը ազգասիրութեան վրայ:



### ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

#### ՄԱՐԴԱՍԵՐ ԳՆԴԱԿԸ

Ընկերվարականութիւնը կը յաւաքուի մէջ :

Մահացու գնդակներն ալ այս վարդապետութեան յարելու միտում ցոյց կուտան և ասի կապացուցուի այն կարգ մը հետաքրքրաշարժ տեղեկութիւններով որոնք կուռի դաշտէն կը հասնին Լոնարայի Պրիքիշ-Մէսիքի-Ճըրնըր անուն բժշկական թերթին :

Եթէ անգլիացիներուն տրմ-տրմ գնդակը այն դժոխային հրէջն է որ բացարձակապէս կուտայ, կը սանջէ և կը սպաննէ, Պօէրներուն գործածած մաւղէրի գնդակն ալ այն քաղաքակրթութեամբ կապարն է որ կը խնայէ. ու երեւակայե՛լ թէ թրանս-վալցի հոմերական քաջերը իրենց անկախութիւնը պահպանելու համար մեծով, պզտիկով մինչեւ երեք սերունդ՝ մեծ-հայր, որդի և թոռ հրացանին վրայ նետուած կը կըռուին և մաւղէրի մարդասէր գընդակը կը գործածեն. հիանալի է արդարեւ :

Արդարութիւնը, իրաւունքը և ուղղամտութիւնը՝ որոնց համար բնորոշներ պակաս չեն թէ ազգաւ անգլիացի են, երբէք այնքան չարաչար կերպով ստնակոխ եղած չէին

որքան թրանսվալի հակամարդկային կռուէն ի վեր :

Ձեմ յիշեր ո՛վ ըսած է թէ պատերազմը բարիք մըն է, յառաջդիմութեան մէկ խթանը. ինչպէս նաև բժիշկ մը կարծեր է թէ տիեզերքը փակուած սենեակ մըն է և օգտակար համարած է որ մարդիկ մեծ թուով պակսին, վասն զի բազմութիւնը օգը կապականէ !!!

Թրէվըս, անգլիացի երեւելի վիրաբոյժ մը որ այս միջոցին Հարաւային Ափրիկէի մէջ Ալպինի վիրաւորեալները կը դարմանէ, կըսէ թէ մաւղէրի գնդակը Լըպէլի, Մանլիսէրի, Վինչըսթըրի և անգլիացոց հիմակուան գործածած Լի-Մէտֆօրտի անվրէպ և անագորոյն հանգամանքը չունի :

Վեց կամ ութը միլիմէթր գալիպր ունեցող, 3 սանթիմէթր երկայնութեամբ և 15 կուամ կշռող նիքէլազոծ պողպատէ պահարանով մաւղէրի գնդակները որոնք 640 մէթր կերթան, կրնան եղեր իրարու ետեւէ հինգ վեց հոգի ծակել անցնիլ, ինչպէս ամերիկեան ծովային զինուորներու հրացանները՝ 2-4 քիլոմէթր հեռաւորութենէն :

Որքան որ սարսուղազեցիկ ըլլան այս մանրամասնութիւնները, այսուհանգերձ թրէվըս կը յայտարարէ թէ գնդակը այնքան սուր ծակող է ասեղի նման որ մարմնին վրայ փոքրիկ, կլոր և շատ որոշ ծակ մը հազիւ կը բանայ, ու զիւ կը

մանէ և ուղիղ գուրս կելլէ՝ միայն դիժ մը ձգելով ետին առանց պատրուածքներ առաջ բերելու . ճամբէն չի շեղիր , պտոյտներ չընելու և խելք է , քաղաքավար է ու փափկանկատ է ճամբան հանդպած ամէն գործարաններուն հետ , միայն . . . . երբեմն սակորը կը ծակէ կանցնի շատ կանոնաւոր կերպով , առանց կտարտուքներ կամ ձեղքուածներ պատճառելու , որոնք վասն գուրս են ստէպ և անդամատութեան պէտքը կը զգայնեն : Հաստատուած է նաեւ որ մաւզէրի գնդակին վրասը աննշան է , նեխում և փտութիւն առաջ չի բերել , անոր պատճառով վէրքին սպիացումը արագ կը կտտարուի և քիչ պարագաներու մէջ է որ կը զայրանայ և ակամայ կերթայ սրտին կամ ուղեղին մէջ շարագործութիւններ ընելու :

Ուրեմն ընկերվարական այս գնդակը գլխաւոր դիժ մը կը կրէ և որ մը եթէ ամէն մարդասպան , ըլլան անոնք պատերազմիկ կամ սուրագործ , այս գնդակներէն գործածէ , մեռնողներու թիւը համեմատապէս քիչ պիտի ըլլայ և վիրաւորեալներն ալ շուտ մը պիտի բժշկուին . իսկ անդամատութիւնը իր վերջին շունչը պիտի տայ՝ նա մանաւանդ զինուորական վիրաբոյժներուն համար :

Մարք-Ֆօրնակ վիրահատը կը

պատմէ թէ բազմաթիւ անգլիական զինուորներ քանի մը օրուան մէջ առողջացած են իրենց ընդունած մաւզէրեան գնդակներու վէրքերէն և անմիջապէս պատերազմելու ելած են վերստին : Միայն սրտին և աւոր մօտերը մտուած գնդակներն են որ մահացու եղած են և կամ շատ ծանրապէս վիրաւորած : Այս անտեղութեան առաջքը առնելու համար Մարք-Ֆօրնակ փոքրիկ դրահ մը յանձնարարած է զինուորներուն , որոնք այսօր պատուանշանի նման կուրծքերնուն վրայ կը կրեն զայն :

Թրէվըս առասպելական պատմութիւններ կրնէ և կըսէ որ գրեգուկէ ծակուած գանկեր երբեք վայրկեան մը իսկ դադրած չեն մէկ քանի Պօէր աւելի մեռցնելու միջոցին վրայ խորհել :

Ձինուր մը որ գլխուն գագաթէն գնդակ մը ընդունած էր , բարեհաճած է թող տարու անոր որ անցնի ուղեղէն , քիւրքէն և բերնէն ու վզին մէկ կողմէն գուրս ելլելով կտրուի երթայ . իբրեւ արգիւնք լոկ գլխուցու մը ունեցած է , զոր անշուշտ անցուցած է god save the queen մը երգելով :

Ուրիշ մըն ալ ամենայն համբերութեամբ հանգիստատես եղած է գնդակի մը անցքին՝ իր գլխին մէկ կողմէն միւսը , ալէն ձախ և քանի մը օրէն առողջացած է :

Որովայնի, լեարդի և երիկամունքի վէրքերն ալ թեթեւ եղած են. միայն անգամ մը այս փորձանքին հանդպողի մը մէջին մէջ քիչ մը արիւն տեսնուած է :

Ձինուրի մը ստամբքը մէկ կողմէն միւսը ծակուած է և ասիկա բնաւ պատճառ մը չէ եղած որ թագուհիին նուէր զրկած շքօլան փառաւորապէս չուտէ և չմարսէ :

Մակէրոֆօնի մէջ ալ լեռնական մը վերէն վար կը ծակուի : Գնդակը մարդուն ուսէն կը մանէ և անցնելով թորերէն, որովայնէն և ալիքներուն մէջէն՝ կշատակրի քովէն սողոսկելով դուրս կելլէ :

Վիրաւորեալը միմիայն փորիցաւ մը կունենայ առաջին վեց օրերուն մէջ և կաթիլ մը արիւն անգամ չի տեսնուիր թուքին մէջ :

Կարելի չէ այժմէն գիտնալ թէ երբ ամբողջ աշխարհ որչէ մուղէրի գնդակ դործածել, պատերազմները քանի՞ սարի պիտի տեսնին : Գուցէ հասնի ժամանակ մը որ Եօթնամեայ կամ Երեսնամայ պատերազմներու վերագարձը տեսնուի և այն տանն ալ աւելի փնտռուի այս դարը որ՝ աշխարհի վրայէն մարգպակսեցնելը բարիք կամ սուղջապահութիւն համարող վարդապետութիւնն ալ ծնաւ մէկ քանի գանկերու մէջ :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

## ՏԻԿԻՆ ՊԱԾԱՌ ՖԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ

Փողոցին դրանը քով, անխնամ պարտէղի մը անկիւնը, ցածկեկ դռունէ մը ներս կը մտնեմ՝ գլուխս ծռելով : Կարելի չէ երեւակայել աւելի անփառունակ եւ աւելի անշուք բնակարան մը. գեախնը՝ ծեծուած հողով յատակուած՝ փողոցի գետնին հետ հաւասար գծի վրայ կը գտնուի, ու վայրահակ ձեղունը՝ ծռուումուռ կրածեփ գերաններով շինուած՝ կարծես ամէն վայրկեան գլխուդ պիտի փլչի : Խրցիկին նեղ ու խղղող տարածութիւնը գրաւուած է ցած բազմոցով մը, սրնտուկով մը եւ վառարանով մը : Ամբողջ կահկարասին : Բայց այս ծայրայեղօրէն վտիտ կահաւորումին վրայ կը զգացուէր հոգածու, խնամոտ ու մաքրասէր մատուրներու հպանքը, եւ շուտ մը կը մըտնէիր թէ ընկերութեան ամենէն մութ ու խոնարհ այդ խաւին մէջ շնչող էակը միջավայրին համար *déplacé* մըն էր, վերէն եկած ինկած հոտ, ճակատագրին բիրտ հարուածներէն քշուած քաշկատուած, եւ որ, սակայն, հոտ խակ իր շնորհին, իր անձին դրոշմը կը ապաւորէր այնքան արտացայտ կերպով :

Խցիկին բնակչուհին տիկին Պայծառ Փասուլեաճեանն էր :

Երբոր ներս մտայ՝ ակնոցը աչքին, բազմոցին վրայ նստած բան մը կը գրէր՝ ծռնդերը գրասեղանի տեղ դործածելով : Թուղթին վրայ նետուած անգաղանապահ ակնարկով մը հասկցայ թէ թատերախաղ մըն էր գրի առածը՝ կա՛մ ընդօրինակելով կամ փոփոխելով : Իմ ներկայութիւնս

ընդհատից իր աշխատութիւնը, զոր մէկ կողմ գրաւ՝ զիս հիւրընկալելու համար:

Տասերկու տարի առաջ Պոլիս տեսած էի զինքը. ու անկից ի վեր ցաւագին փոփոխութիւն մը առաջ եկած տեսայ իր ամբողջութեանը մէջ: Դէմքը ան ատեն աւելի լեցունկեկ էր, թէև միշտ սոփոյն լեցունութիւն մը. խորշոմի բարակ գիծերը հիմակ շեշտուած էին՝ մորթին կծկուելուն պատճառաւ: Բայց աչքերը նոյնն էին մնացած, սա տարբերութեամբ որ արտեւանունքը թուլցած էին ու փոթերու խուրձ մը կը մեկնէր աչքերուն քովերէն, մանր, պճլտացող, բոցավառ աչուրներ՝ յարաչարժ անհանգարտ արտայայտութեամբ, որոնք միշտ ժպիտ մը կամ դարմանք մը կը ցոլացնեն իրենց կլոր, սեւեռուն բերերուն վերեւ:

Պարզուկ պարեգօտի մը մէջ սեղմած էր իր վտիտ մարմինը, որուն ճապկութիւնը սակայն երեւան կուգար իր ամենէն թեթև շարժումներէն իսկ: Մագերը սրունք հակառակ իր տարիքին դեռ ձիւնոտուած չեն, գանկին վրայ խառածոպ մը կը ձեւացընէին, վաղնջական պչրանքի թեթև հով մը տալով իրեն:

Պոլսէն հեռու, Պուլկարիոյ մէկ անկիւնը, անձանօթ թաղի մը այդ նեղ կրճուկ խորշին մէջ, բոլոր այն տեսակ բաներով շրջապատուած որոնք աղքատութեան ու լքումի սառնութիւնը կը փչեն երեսիդ, արեւելեան թատրոնի նախկին համբաւաւոր դերասանուհին կը ստուապէր անշուշտ: Ու ես, սիրտս անձկօրէն սեղմուած, իսկոյն քիչ մը անտեղի հետաքրքրութիւնն ունեցայ հասկնալու թէ ինչ-

պէ՛ս կը հոգար իր ապրուստը, քանի որ ուր է բեմի վրայ չէր երեւնար բնաւ, ու բոլորովին քաշուած կ'ապրէր, աննշան տնձանօթի մը պէս:

— Ասեղ ծեծելով, կար կարելով ապրուստս կը ճարեմ, ու մէկուն կարօտ չեմ, փառք Աստուծոյ, պատասխանեց սքողուած դառնութեամբ մը:

Բայց գանգատ մը ունէր իր շըրթներուն վրայ. կարողչէքը շատ աժանցած էր. գիները կոտորած էին. մանաւանդ շապիկին գիները, ո՛հ, անտանելի, անհանգուրժելի կերպով վար իջած էին. բայց ի՛նչ ընել. ըստիպուած էր այդ անիրաւ աշխատութեան գլուխ ծռելու, վասն զի ատկէց անդին, աւա՛ղ, մուրալ կը մնար հայ բեմին ամենէն հին ու ամենէն արգիւնաշատ աշխատաւորներէն մէկուն:

Նօսակցութեան ղուարթ դարձուածք մը տալու համար դերասանութեան արուեստին կը դառնամ ու կը հարցընեմ թէ ալ վերջնականապէս բեմական կեանքը թողած հեռացած է: Ու յանկարծ կը բռնկի ան, տխուր ու սփոյն կիւնը մէկէն իմէկ կը բորբոքի, աչքերը տարօրինապէս փողփողուն, այտերը թեթևօրէն շիկավառ: Ա՛լ հիմա մոռցած է ներկան ու անոր չարչարող պայմանները, հեռուն փոխադրուած է, անուշ ու անմոռանալի անցեալը՝ կեանքով, փառքով ու երջանկութեամբ լիլեցուն:

1861 ին էր երբ ինք, քահանայի մը աղջիկը, բայց ~~աղջիկ~~ քահանայի մը, ինչպէս ինքը կըսէ, Բերա մօտիկ աղգականի մը տունը ապրելով դեռ հազիւ տասնըվեցամեայ բուսն խորշանքով մը կը լցուի այդ

միջավայրին հանդէպ, ուր վիճակուած էր իրեն զգալ ու խորհիլ:

— Իսկոյն հասկցայ թէ ինձի պէս աղջիկ մը անփորձ ու անուս՝ պիտի մոլորէր այն ծուղակներուն մէջ զորս երիտասարդները, կիրքով ու կեղծիքով լի, կը լարեն շարունակ մանկամարդ աղջիկներու շուրջ, զանոնք հրապուրելու, իրենց բիրտ փափաքներուն գոհացում տալու համար միայն: Կարծես բնագրով մը ըմբռնեցի այս բանը. ու խտէալի մը, սիրտ ու միտք պարուրող խտէալի մը մէջ ուղեցի գտնալ բաղձանքներուս, ձրգտումներուս, կամ նոյն իսկ փառքի մը քաղցր գոհունակութիւնը: Նոր հիմնուած էր Արեւելեան թատրոնը. շատ անդամ ազգականներուս հետ ներկայացմանց կերթայի: Սիրտս կը խաղար, թունդ կելլայի, չեմ գիտեր ինչ բան մը զիս այդ լուսաշող սրահին վրայ կը քաշէր: Մտերմութիւն հաստատեցի քանի մը դերասանուհիներու հետ, որոնց քիչ քիչ յայտնեցի փայփայած խորհուրդս: Ու քանի մը ամիս ետքը դերասանուհի ընդունուած էի Արեւելեան թատրոնը:

Տիկին Փասուլեանցի կը թուէ ան ատենուան դերասանները, Վարդուկեան, Փասուլեանցի, Էջեան, Մազաքեան, Արուսեակ, Հրաչեայեւյն, որոնց հետ քալած էր միեւնոյն դափնիներուն վրայէն, հայ բեմին փառքը շինելով, նորազարթ հասարակութեան մը մէջ արուեստի ճաշակն ու հաճոյքը արթնցնելով:

Տենդոտ յախշտակութեամբ մը ու տեսակ մը երազանքի մէջէ այս բոլոր մղձկոտ վերյուշումները կը հաղորդէր ինձ, մտքին ու սրտին թռիչներովը փոխադրուելով լոյսի, ծափի, յուզ-

ման այդ խանդաղեղուն անցեալը, ուր ինք, մանկամարդ ու գեղեցիկ, արուեստին սիրովը վառուած ու յաջողութեան սարսուէն գինով, իր երազած ու փնտռած խտէալին հետ դրկախառնուած կզգար ինքզինքը:

Հապա Կովկասի կեանքը: Օ՛, անմոռանալի բան է ան: Տիկին Փասուլեանցի ու թը տարի շարունակ Կովկասի լեռներուն մէջ ու արարատեան աշխարհը կը պտտցունէ իր արուեստը, զոր այդ հասարակութիւնը գիտակցաբար կը գնահատէր եւ իշխանավայել կերպով կը վարձատրէր: Եւ իրօք կարծես ուստահայուն տըրուած է թատերական թրքահայ տաղանդները երեւան հանել, քաջալերել եւ զարգացնել: Ադամբան, Դըրեանց, Սիրանոյշ, ուրիշ ոչ մէկ սեղ այնքան կարողացած են իրենց գեղարուեստական բարձր տաղանդը ի յայտ բերել որքան Կովկաս: Մեր բեմին աշխատաւորները Պոլիս եղած են՝ հասարակութեան աչքին՝ զուարճացնող դերասաններ միայն, մինչ Կովկաս սիրտ ու միտք պարարող նուրբ արուեստագէտներ: Ըմբռնումի այս տարբերութիւնը կը ցուցնէ ժողովրդային զարգացման մակարդակը, կամ գոնէ հասկցողութեան կարողութիւն մը, որ բնագրական է թերեւս:

— Երջանիկ էի Կովկաս, անընցող տիկինը խոր հառաչանքով մը: Եւ այդ ութ տարուան պտոյտը այն աստիճան տպաւորութիւն թողած էր վրաս որ յետոյ դարձեալ գացի հոն ու երեք տարի վայելեցի Կովկասը, որուն այնքան խոր ու անմոռանալի յիշատակները կան մտքիս մէջ:

ՅՊ էն յետոյ, անխոնջ արուեստագէտը վերջնապէս կը դառնայ Պոլիս,

ուր Ազամանի հետ բեմ կելլայ այն զիւթական ներկայացմանց շարքին համար որոնք Շէքսբիրի մեծ հայ թարգմանչին աղմկալից կեանքը փակեցին այնքան եղերականօրէն:

\*  
\* \*

Ա՛լ անկէց ետքը անկումի ցաւագին շրջանն է որ կսկսի: Մահը աւերներ կընէ ընտանիքին մէջ, որ արդէն շատոնց կորուսած էր իր համերաշխութեան տաք ոգին: Ասպարէզը ուր ամուսինները նետուած էին, — եւ որ տեսակ մը բախտախնդրութեան կը մօտենայ երբոր յաջողութիւնը յարատեւ չըլլար ու հողեկան յափրացումէ աւելի նիւթական պէտքերու գոհացման կը մղէ դերասանը, — թուլցուցած էր ընտանեկան կապերը, մայրը ասդին, հայրը անդին, զաւակներն ուրիշ տեղ ցրուելով: Մըտքի ու հոգիի իտէական անուշ սլացումներէն յետոյ՝ իրական կեանքի բրտօրէն կսկծեցուցիչ պարագաներն են որ կուգան ամէն բան մոռցնել տալ: Տիկին Փասուլեաճեան կը թաղէ իր զաւկները, աղջիկն ու մանչը, ապահովապէս զոհերը ընտանեկան կազդուրող խնամքի չզոյութեան: Կը յիշեմ Երուանդը մանաւանդ, բարձրադիտակ երիտասարդ մը նուրբ կազմուածքով, սեւ սաթի պէս փայլուն երկար մազերով: Փառանգականօրէն ընտրած էր ան ալ իր ասպարէզը, բեմը: Կը խոստանար բան մը ըլլալ. եւ ահա օր մը իմացանք որ Երուանդ Փասուլեաճեան մեռած է թոքախտէ ... Ազգ. Հիւանդանոցին մէջ: Չաւակներուն անհետացման հետ ընտանեկան վերջին կապերն ալ խզկոտուած էին:

Ու ի՞նչ մնացած է հիմա բոլոր այդ անցեալէն, բեմի վրայ կրուած յուզումներու, սպառող խոնջէնքներու, փայփայուած յոյսերու եւ արուեստին սիրովը իրարու կցուած այդ երկու կեանքերէն. ու նաեւ բոլոր ծաղկեփունջերէն, ծափերէն, փառաբանող աղաղակներէն, հիացման կուռ արտայայտութիւններէն:

Իրականութեան կմախային ուրուականը միայն. մէկը, հոս գէմս, վառնայի մէկ անկիւնը, գետնամած խղիկի մը անկիւնը, ամբոյն ու նըքողուած, սարսափելի լքման մը թաղծութեամբը առլի, անօթի չմնալու համար՝ շապիկ կարելու ստիպուած, իսկ միւսը, ամուսինը, հոս հոն թափառաշրջիկ, վաստակաբեկ ու կեանքէն զզուած դառն յափրանքով մը՝ թատրոնի որմերուն մէջ բախտ փորձելու յետին թապլտունքներովը ցնցուած:

Բեմի վրայ իրենց ներկայացուցած շինծու ողբերգութիւններէն ետքը, կեանքի այս դժբախտ յեղաշրջումը ամենէն կսկծալի ողբերգութիւնը չէ՞, զոր խաղալու ստիպուած են՝ անտարբեր ու անկարեկիբ հանդիսատեսներու աչքին առջեւ, որոնք ոչ միայն չեն ծափեր այլեւս, հապա գութի ակնարկ մը իսկ չեն նետեր դէպ անոնց, թշուառութեան այս ամենէն իրական դերասաններուն:

Այս մտածումներով համակուած զուրս ելլայ տիկին Փասուլեաճեանի խոնարհ խցիկէն:

Ե. ՍՐՄԱՔԵՇԻՍԱՆԼԵԱՆ

ԵՐ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ԵՒ ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆ

Անահիսի վերջին թիւէն կը տեղեկանանք թէ մայիս 12ի (ն. տ.) իրիկունը, Բարիզ, Քաֆէվոլթէոի մէջ երեկոյթ մը տեղի ունեցած է, ի պատիւ Երուանդ Մանուէլեանի և Լալար Շահինի: Լաւագոյն դազափար մը կարելի չէր յղանալ յարգանք ընծայելու համար այս երկու հայ տաղանդներուն որոնք Եւրոպայի առջեւ այսօր մեր ցեղին մտքի ու գեղեցկագիտութեան կարողութիւնները կը ցուցադրեն այնքան փառաւոր կերպով:

Շառիղ շնորհաւորական հեռագիր մը ուղղելով երկու տաղանդաւոր հայերուն փութացած է իր յարգանքի պարաքը կատարել այդ ածնախմբութեան առթիւ:

ՄԱՅ ԱՅՎԱԶՈՎԱՔԻԻ

Հռչակաւոր հայ ծովանկարիչ Յովհաննէս Ա.Յ. վաղովաքի նախընթաց չորեքշաբթի օր Թէոտոսիայի իր մասնաւոր բնակարանին մէջ վախճանած է 83 տարեկան:

ՄԻԻԹԱՐ ԱԲԲԱ

Իբր տարի ու կէս ետքը, 1901 սեպտեմբեր ծին, վենետիկի վանքը պահ մը պիտի թոթուէ իր մենաստանական բազմամեայ ըստ թիւը, — ուր դարեւոր անշուկ փթթում մը տեղի ունեցած է հայ մասուրականութեան և հայ դպրութեան, — ածնելու համար իր հիմնարկութեան երկհարիւրամեակը:

Այս հանդէսին մէջ, որ գերազանցապէս ազգային հանգամանք ունի, պիտի ներբողուի ոչ միայն բացման թուականի մը քիչ մը պայմանագրական տարեգարձը, այլ մանաւանդ երկդարեայ լիթիարի գործունէութիւն մը հիանալի համբերութեամբ ու երկայնամուտութեամբ առաջ տարուած, հսկայ փեթակի մը հանգունակ ուր գրեչը խորտքանդակ ըլիջներ կերտած է անսպառ մեղրով լեցուն, որ անգույն մնունդ կը ջամբէ ազգի մը մտքի պահանջներուն, երկար տարիներէ ի վեր:

Աշխատութեան, գեղեցիկ Դըպրութեան, Ազգային Մասնադրութեան հանդէսն է որ պիտի տնուի, և այս հանդէսին փողփողմանը մէջ սերաստացի մեծ Արքաին խորհրդաւոր ստուերը պիտի յածի երկնառակ ոգիի մը երանաբեր սաւառնումովը:

Երկու դար առաջ ո՞վ կրնար գուշակել թէ Հայաստանի խորերէն

դուրս ելլող խոնարհ կրօնաւոր մը՝ միտքը գեղեցիկ ծրագրերնեքով յղի՝ պիտի երթար Միջերկրականի խաղաղիկ մէկ անկիւնը յարգարեւ հայ կորովին, հայ մտքին ամենէն բազմաբեղուն արտերէն մէկը, ուսկից բողբոջող տունկերը՝ անդուլ ածու մով՝ պիտի դառնային բազմաճղի հաստարմատ ծառեր որոնք ամբողջ ազգի մը մարմնին մէջ պիտի երկրնցունէին իրենց ուժեղ ու կենսայորդ ստերը:

Եւ այս երկու դարու յամառ, հանդարտ աշխատանքը եղած է այն կենսանորոգ հիւթերէն մէկը որ՝ երբ հայը իր երկրին մէջ տուայտանքի ու կեանքի քստմանի պայքարի մը սարսուռներովը կը սպառէր, անուղղակի կերպով կեանք, ոգեւորութիւն և յոյս ներշնչած է անոր:

Վենետիկի վանքը հայութեան մեծ նկարագիրը խորհրդանշող կոթողներէն մէկն է. անկից բխող մտաւոր լոյսի ճաճանչումը ոչ միայն ազգային վերակենդանութեան ծառայած է ու պիտի ծառայէ, այլ և քաղաքակիրթ աշխարհի համար հայուն նկարագրին ամենէն յստակ ցոլացումը կը հանդիսանայ:

Ուրեմն տարիուկէս ետքը տեղի ունենալիք հանգէսը պէտք չէ որ մասնական հանգամանք մը լոկ ունենայ, բոլոր հայութիւնը այդ օր եթէ ոչ գործնականապէս՝ գէթ եւ

րեւակայութեամբ թռչելու է վենետիկի դեղարուեստական ծովախորշը, Ս. Ղազարի մենաւոր կղզեկին վրայ, հոն ողջունելու համար Մխիթարայ, Բաղրատունիի, Հիւրմիւզի մեծ ստուերները և սպիտակափառ դէմքը մեծանուն հեղինակին, Ալիշանի:

Երկհարիւրամեակին տօնը պաշտօնապէս կատարելու համար, Վենետիկի միաբանութիւնը ձեռնարկած է մինչև այդ օրը լոյս ընծայել քանի մը կարեւոր հրատարակութիւններ, ինչպէս պատմական գործ մը հայր Ալիշանէ, պատկերազարդ ընդարձակ կենսագրութիւն մը Մխիթարայ, պատկերազարդ պատմութիւն մը էն երեւելի Մխիթարեաններուն, Մխիթարայ և Մխիթարեանց մէկ պատմութիւնը ֆրանսերէն, և ուրիշ կարեւոր հրատարակութիւններ:

Ե. Ս.

### ԵՐԻՏՏԱՍՍՐԳԻ ԹՈՒՐԳԵՐԸ

Երիտասարդ-թուրքերը գործունէութեան մէջ ըլլալ կը կարծուին: Խմբովին կը բռնուին Պոլիս եւ կ'աքսորուին: Սուլթանը կը հնձէ զանոնք այն միեւնոյն հանդարտ ու հաշուած մեթոտով որով կոտորեց հայերը: Իրաւ է որ Վսփորի եւ Տարաանելի վրայ այս երիտասարդ-թուրք կոչուածները քիչ մը տարօրինակ կերպով զերար կը խաչաձեւեն. ո՛րը դուրս կելլայ

գրօջ պարզած ընդդէմ Սուլթանի, մինչ ուրիշ մը ներս կը մտնայ ոսկիով տաքցած՝ Սուլթանին փեշը պագնելու համար: Մէկ կողմէն Մուրատ պէյ նորէն կը կծկէ Պոլսէն, միւս կողմէ կարմիր ժէօն-թիւրք մը, Ալի Հայտար պէյ, ներս կը մտնայ՝ բարձրագոյն ներման արժանացած: Խնդճերը իրենք ալ չեն գիտեր ինչ ընելիքնին:

Եւ ահա եւրոպ. թերթերը կը գրեն թէ Պոլսոյ նշանաւոր թուրք անձնաւորութիւններէն Տրիպուլի նորընտիր կուսակալ Իսմայիլ-Քէմալ պէյ Մարտիլեա խոյս տուած է հետեւեալ հետաքրքրաշարժ պարագաներուն մէջ:

Քէմալ պէյ Տրիպուլիս երթալու համար Երլուրդի պալատը ձգելէն անմիջապէս յետոյ իր երեք զաւակներով կ'ապաստանի անգլիական Սալոնիկ թողանութակիր շոգենաւը որ հարկ եղած հիւրասիրութիւնը ընելով խընդիրը կ'իմացնէ անգլիական դեսպանատան եւ այս վերջինը իր կարգին այս լուրը կը հաղորդէ կայսերական պալատ: Սուլթանը ափ ի բերան կը մնայ եւ կը յայտարարէ որ եթէ Քէմալ պէյ ուզէ՝ դարձեալ կրնայ Տրիպուլիս երթալ եւ կամ, եթէ ուզէ, Երոպա երթալ ապրիլ:

Քէմալ պէյ նախընտրելով Տաճկաստանը ձգել, կը փոխադրուի Ռիւպաթինի ընկերութեան Մարտիլեա մեկնող շոգենաւը: Քէմալ պէյ յայտարարած է թէ ամէն զարգացած մարդու համար Տաճկաստանի մէջ ապրիլը անկարելի է եւ այս պատճառով կը ձգէ Թուրքիան, դիրքը եւ պաշտօնը, ու կը նախընտրէ հեռուները երթալ՝ ազատ ապրելու համար:

ԽՆԿԱՆՆԵՐՈՒ


Խնհաններու ինչպէս նաեւ ժողովուրդներու համար նիւթական և բարոյական անդորրութեան հասնելու ամենակտրուկ ճամբաներէն մէկն ալ ինայոյղութիւնն է: Ո՞վ կրնայ ուրանալ այս բացարձակ ճշմարտութիւնը — ո՛չ սք. բայց ո՞վ կը հետեւի անոր — շատ քիչեր:

Մենք կասկած չունինք որ մեր ընթերցողներէն իւրաքանչիւրը կը ճանչնայ մէկէ աւելի մարդեր և ընտանիքներ, որոնք ժամանակաբարեկեցիկ և հարուստ էին, բայց կարծելով թէ բախտին անիւր միշտ գէպ իրենց ուզած կողմը պիտի դառնայ, չմտաբերեցին բան մըն ալ սեւ օրերու համար ջոկել և մնացին թշուառ:

Իսկ արհեստաւոր, բանուր դասակարգը ընդհանրապէս կը շահի ու կուտէ քանի որ երիտասարդ է և աւողջ: Թէև քիչ կը վատորկի, բայց ոչինչ կը խնայէ, և երբ կը հասնին ծերութեան ու հիւանդութեան ցաւազին օրերը, անօթի է, երեւակայեցէք, անօթի . . .

Ու այսօր այդ անօթիներու թիւը գուցէ համեմատապէս աւելի նրուազ պիտի ըլլար. եթէ մարդիկ գիտնային ինայոյղութեամբ ապրիլ:

Չեմ գիտեր ո՞ր երեւելի պատմագէտ-փիլիսոփան ըսած է թէ « մարդիկ իրենց համար նոր պէտ-



քեր կտակներն և այդ այդ պէտքերը դահայներու համար միջոցներ կը հնարեն, ահա այս է քաղաքակրթութիւնը» :

Մեր նիւթէն փոքրիկ շեղումով նմը կըսենք թէ մենք այդ իմաստութիւնը լուսաւոր երեւութիւններքեւ կը տեսնենք ուրիշ աւելի մութ, աւելի սեւ իրողութիւն մը. մարդիկ իրենց համար նոր պէտքեր կտակներն և կուզեն անպատճառ ամէն գնով այդ պէտքերը դահայներ, ահա այս է անթութիւնը : Եւ միւթէ, քաղաքական ներկայ պայմաններու շնորհիւ, քաղաքակրթութիւնն ու անթութիւնը ձեռք ձեռքի առած համաձայն չեն ընթանար : Միւթէ մարդկային գերագոյն լուսաւորութեան կեդրոնները՝ միեւնոյն ժամանակ մարդկային գերագոյն թշուառութեան բոյները չեն :

Վերագտնանք մեր նիւթին :

Մեր մէջ ընդհանրապէս կը տիրէ այն կարծիքը թէ ինչպէս կրնայ խնայողութիւններ ընել այն մարդը, որ հազիւ իր ապրուստը կրնայ հայթայթել : Սակայն վստահաւոր սխալ մըն է ասիկա :

Մեր կարծիքով մարդ մը իր կարողութեան չափովը պէտք է չափէ իր պէտքերուն քանակին ու սրակը :

Տեսնելու, խնայելու պէտքը աւելի մեծ, աւելի ստիպողական է, մանաւանդ անոնց համար, որոնք այսօր քիչ կը շահին, բայց կրնան

վաղը չշահիլ : Շատ ունեցողը չէ որ կրնայ խնայել՝ հապա կամք ունեցողը : Ինչպէս շուայրութիւնը ներքի չէ նոյն իսկ հարուստին համար, նոյնպէս խնայողութիւնը անհրաժեշտ է նաեւ աղքատին համար :

Ունեցածը պէտքերուն յարմարցընելը ունեւորի դործ է. իսկ չքաւորը, նոյն իսկ չափաւոր կարողութիւն ունեցողը իր պէտքերը պիտի յարմարցնէ իր ունեցածին : Իրաւէ, քիչ մը անասնելի է ասիկա, բայց անհրաժեշտ է զերծ մնալու համար ապագայի աւելի դժնդակ կայողութենէ մը, որ կը կոչուի անօրութիւն :

Անշուշտ չենք ներեր անոնց, որոնք կը կարծեն թէ մենք մեր խնայողութիւնը կուզենք հասցնել մինչեւ խոտելի կծծութեան, մինչեւ զգուելի ժլատութեան :

Խնայողութիւն ըսելով կուզենք հասկնալ այն խորին ու շաղրով լուսնը, զոր մարդ մը իր ելեւմուտքին մէջ պիտի դնէ հաւասարակշիւտ համար դայն, այն կանոնաւոր յարասեւութիւնը որով ամէն մարդ իր շահածէն սրտը մոտ մը միշտ մէկ կողմ պիտի ամբարտէ ապագայի անսրտութեան դէմ զինուելու համար : Մանաւանդ որ կարելի չէ ուրանալ ճշմարտութիւնը անաստագէտ-մարդասէրի մը սա խօսքին. « 10 շահ 9 ծախս, հետեւանք երջանկութիւն » :

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

### Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Կ

Թերթերը կը գրեն թէ չորս հարիւր յիսուն վանեցիներ տաճկեցի են: Ի՛նչ ալ ըլլան այն պատճառները որոնք մղեր են այս հայերը լքանելու իրենց հայրենի կրօնը, բացարձակապէս արգարացում չիկայ իրենց այդ քտորմնելի վարմունքին համար:

— Ամերիկայի հայերը գումարումներ ընելով որոշեր են Մաք Քինլիի ներկայացնել խնդրագիր մը, որով հրաւիրեն նախագահը տեղի չտալ այն պահանջումներու մէջ զորս Միացեալ Նահանգներու կառավարութիւնը կընէ Սուլթանէն՝ կոտորածներու ատեն ամերիկեան հպատակներու կրած վրնասներու հատուցման մասին, ասով հայկական ջարդերուն մէկ փոքր վըրէժը լուծելու համար:

— Արկայլի գուքսը մտեր է: Նոսն դոտ հայասէր մըն ալ պակաս՝ Մեր դատին յաջողութեանը համար ճտուեր խօսած եւ յօրուածներ գրած է:

— Վառնա կաղմուած Որբախնամի մասին մնր անցեալ թուով տուած լուրին մէջ մոռացում մը եղած էր: Կործաղբի ժողովին կ'անդամակցի նաեւ Պ. Աղնաւորեան, որ կը վարէ գանձապահի պաշտօնը:

— Պ. Նրուանդ Մանուէլեան — անուն որ այլ եւս կշիռ ունի գիտական աշխարհին մէջ — ոչ թէ քայլ առ քայլ, հապա արշաւակի կը յառաջդիմէ: Կարճ ժամանակուան մէջ եղաւ անդամ Մարդապանական ընկերութեան, Օքսֆօրտի Գրեյսի եւ պակաւոր բժշկական կաճառին: Շուրջ իր ջերմ շնորհաւորութիւնները կուղղէ Կեղրոնականի նախկին տաղանդաւոր ուսանողին:

— Սուլթանը իրատէով մը արդիւնք է երկրորական գործիքներուն թուրքիա մուտքը. նոյն իսկ երկրորական զանգակներն ալ արդիւնուած են:

— Յունիս Ծին Բարիղի մէջ գրական ու երաժշտական ցերեկոյթ մը տեղի պիտի ունենայ նախաձեռնութեամբ Արշակ Չօպանեանի, ի նպաստ հայ որբերուն: **Ligue des droits de l'homme et du citoyen**ը յօժարած է իր հովանաւորութիւնը նուիրել այս հանգէսին:

— Պոէրները նահանջելու վրայ են: Անգլիական բանակը վերսկսած է իր յառաջխաղացութիւնը: Գուցէ քիչ ժամանակուան մէջ անգլիական կայսերականութիւնը իր վերջնական յաղթանակը տանի հարաւային Աֆրիկէի ոսկեհուռ երկրին վրայ, անհամար զիւղեր կոխելէ անցնելէ յետոյ: Պոէր պատուիրակութիւնը ներուայի ու Ամերիկայի մէջ պղատոնական համակրութիւն մը միայն կը գտնէ, վասն զի գիւսնապիտութեան արդի պայմանները թոյլ չեն տար միջամտութիւն մը ընելու իրենց անկախութեան համար մաքառող այդ ափ մը կտրիճներուն ի նպաստ:

— Շուրջ խմբագրութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ արտասահմային թերթերուն որոնք քաջալերական տողերով ողջունած էին Շուրջ երեւումը:

— Վառնայի Որբախնամ նորակաղմ մարմինը մեղ ուղղած է յայտարարութիւն մը որով կը ծանուցանէ թէ հայ իգական սեռն ալ ուրոյն մարմին մը պիտի կազմէ իր աշակցութիւնը նուիրելու համար սկսուած գործին:

Оггосорникъ Н. Драгулевъ  
Печатница «Орденнаго» — Варна.

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ ունինք ծանուցանել արդոյ հայ հասարակութեան թէ Երկսեռ Որբախնամ Ընկերութիւնը ապրիլ մէկէն սկսած է իր բաժնեգիւնները և մասնաւոր նուէրները գանձել և ընդունիլ:

Ուստի հրապարակաւ կը յայտարարենք և լիտյոյս ենք որ թէ տեղոյս և թէ արտասահմանի ընդհ. հայութիւնը չպիտի զլանայ իր նիւթական և բարոյական աջակցութիւնը և օգնութիւնը, որովհետեւ սոյն պէտքը արդի ժամանակուան անհարմարեղա և վսեմներէն էն կարեւորագոյնն է, այն որբիկներն են որ պիտի կազմեն ապագայ Հայութեան հաստատուն կուռանը:

Մնանք յարգանք

Ի դիմաց գործադիր ժողովոյ Երկսեռ Որբախնամ  
Ընկերութեան «Վասպուրականի»

Ատենադպիր

Վ. Ատենապետի

Յ. Կ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

ՅՈՎՍԷՓ ԲԱՐՍԵՄԵԱՆ

Հասցէ՝

H. G. DJANGULIAN (\*)

(Bulgarie)

Varna.

Յ. Գ. — Ընկերութեանս պաշտօնական կնիքը չը կրող ընկալագիրներու վճարուած ստակներուն՝ վարչութիւնը պատասխանատու չէ:

Նոյն

(\*) Պէտք է աւելցնել նաև ընկերութեան վերաբերիլը:

## ՓՈՐԱԳՐԻԶ

ՅԱԿՈՅ ՄՈՍԿՈՅԵԱՆ

Կը պատրաստէ ամէն տեսակ զմուռ եւ լուսանկարէ փորագրութիւն. տօսախի, սակիի, արծաթի, պողպատի եւ ամէն տեսակ մետաղներու վրայ գեղարուեստօրէն կը փորագրէ պատկերներ եւ զարդանկարներ: Դիմել Արեւելեան Տպարան:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշտութեամբ եւ փութով կը կատարուին:

# ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. ՆԱՅ

Երկրորդ քաղ, Շիրչենախ փողոց, (Սագալլո յեշմէի կից)

Կը ապագրս ին հայերէն, պաշտօններէն, գաղղիներէն, յունարէն, տանկերէն և այլ լեզուներէն, յետքէն, հասցէտուն, հարսանեկան հրատիրագիր, աղբարտարութիւն, հեղանակագրութիւն, պահարան, մահազդ, վաճառականական ամէն սեռակ գործեր, ղերբ, լրագիր, եւ այլն:

Գունաւոր և ոսկեզօծ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ ապակեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵՐ ԽՆՍՄԻ ԵՒ ՄԱԲԸՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵԸ ՅՈՅԺ ԳԻՒՐԱՄԱՏՅՆԻ

Ուրիշ փողակներէ եկած յանձնարարութիւններ նշանակաւ քիչ քիչ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).